Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գնդակորսիչի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 հունիսի 2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Միքայել Վարդանյանը, անդամներ՝ Մեր Քամալյանը, Նաիրա Պողոսյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/7 ծածկագրով գնման ընթացակարգի Հայտերի բացման, գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Միքայել Վարդանյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

Հ/Հ	Մասնակցի անվանումը, հասցեն	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Գնման գին /ՀՀ դրամ /
1	**ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ**	ԱԱՀ վճարող	1250000	1500000

Հանձնաժողովը պարզեց, որ ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1-ը՝ Դիմում-հայտարարությունը սահմանված կարգով հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև լրացված չէ «Ապրանքի ամբողջական նկարագիր» դաշտը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետով

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց՝

-ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով, և ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

-Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2026թ. հունիսի 19-ին ժամը 10:00-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում (սենյակ 233):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Միքայել Վարդանյան

անդամներ _____ Մեր Քամալյան

_____ Նաիրա Պողոսյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան